ՆՈՐ ԴՐՔԵՐԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՆ 25 ՏԱՐՈՒՄ, *ՀՍՍՀ ԳԱ Հրատարակչություն, 1968, 580 էջ,* ռուսերեն (խմբագրական կոլեգիա — Մ. Պ. Աղայան, Հ. Ա. Ավետիսյան, Վ. Հ. Դուլմանյան, Ս. Տ. Երեմյան, Գ. Ն. Հովհաննիսյան, Հ. Գ. Մաղամյան, Ա. Շ. Մնացականյան, Ա. Բ. Նալբանդյան, Գ. Բ. Պետրոսյան. Մ. Մ. Ջրբաշյան):

Գիրքը բաղկացած է նախաբանից, առաջաբանից և 5 գլուխներից: «Ֆիզիկո-տեխնիկական և մաթեմատիկական գիտություններ» խորագրով առաջին գլխում զետեղված են ՀՍՍՀ ԳԱ պրեզիդենտ Վ. Հ. Համբարձումյանի և Բյուրականի աստղադիտարանի դիրեկտորի տեղակալ Լ. Վ. Միրզոյանի «Աստրոֆիզիկա», Հ. Խաչատրյանի, Ա. Ներսեսյանի, Ա. Պետրոսյանի «Մաթեմատիկա», Բ. Աբրահամյանի, Մ. Մանուկյանի «Մեխանիկա», Դ. Դարիբյանի «Ֆիզիկա», Գ. Աղոնցի «Էներգետիկա», Ա. Անանյանի, Բ. Բունիաթյանի, Մ. Թորգոմյանի «Ջրային պրոբլեմներ», Մ. Սիմոնովի «Շինարարական նյութեր, կոնստրուկցիաներ և կառուցվածքներ». Ժ. Լորեցյանի «Բյուրականի «Օպտիկա-մեխանիկական լաբորատորիան» հոդվածները: Այդ հոդվածներում համառոտակի ցույց են տրված գիտության տվյալ բնագավառներում ձեռք բերված հաջողությունները: Բաժնի վերջում տրված է տվյալ գիտությունների գծով հրատարակված հիմնական աշխատությունների ցուցակը:

Գրքի հաջորդ՝ երկրորդ բաժինը նվիրված է քիմիական գիտություններին, որտեղ տպագրված Շ. Մաիլյանի «Օրգանական քիմիան», Ն. Բարիյանի «Նուրբ օրգանական քիմիան», Գ. Բունյաթյանի «Բիոքիմիան» և Ա. Նալբանդյանի «Քիմիական ֆիզիկան» հոդվածներում տրված են գիտության այդ ճյուղերի ստեղծման ու զարգացման պատմությունը, ձեռք բերած հաջողությունները և հետագա զարգացման հեռանկարները:

Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում նաև «Երկրի մասին գիտություն» գլուխը, որտեղ հրապարակված Ա. Քոչարյանի «Երկրաբանություն», Ց. Հակոբյանի, Բ. Կարապետյանի, Ս. Շահինյանի «Գեոֆիզիկա» և Ա. Բաղդասարյանի, Գ. Աբրահամյանի «Աշխարհագրություն» հոդվածներում լուսաբանված են Հայաստանի երկրաբանների, գեոֆիզիկների և աշխարհագետների նվաճումները:

Լեռնարդյունաբերությունը կարևոր տեղ է գրավում Հայաստանի Լկոնոմիկայի մեջ, որի զարգացման գործում հսկայական աշխատանք է կատարել ակադեմիայի երկրաբանության ինստիտուտը: Երկրաբանների հետազոտման հիմնական պրոբլեմներից է Հայաստանի տերիտորիայում հանքավայրերի առաջացման և տեղաբաշխման օրինաչափությունների ուսումնասիրությունը: Անցած 25 տարում լուրջ հաջողություններ են ձեռք բերվել նաև գեոֆիզիկայի և աշխարհագրության բնագավառներում: Հանրապետության արտադրողական ուժերի բուռն զարգացումը հրամայական պահանջ էր դնում մանրամասն ուսումնասիրել բնական բարդ պայմանները և բնական բազմատեսակ հարստությունները: «Աշխարհագրություն» բաժնում մանրամասը տրված է գիտության այդ բնագավառում կատարած հայ գիտնականների հայտնագործությունները, դրանց պրակտիկ օգտագործման հարցերը:

Գրքի կարևոր բաժիններից է նաև «Կենսաբանական գիտություններ» գլուխը, որտեղ առանձին հոդվածներում ընդհանուր գծերով տրված են բուսաբանության, կենդանաբանության, միկրոբիոլոգիայի, ազրոմիկրոբիոլոգիայի, ֆիզիոլոգիայի, բիոնիկայի, բիոֆիզիկայի, հիդրոբիոլոգիայի, էքսպերիմենտալ կենսաբանության բնագավառներում Հայաստանի գիտնականների ձեռք բերած նվաճումները:

Գրքի ընդարձակ բաժիններից է «Հասարակական գիտություններ» գլուխը, որտեղ ներկայացված են՝ Գ. Ալահվերդյանի, Է. Տեր-Հակոբյանի, Վ. Խոջաբեկյանի «Տնտեսագիտություն», Վ. Բարխուդարյանի «Պատմություն», Բ. Առաքելյանի, Դ. Վարդումյանի, Ա. Նազինյանի «Հնագիտություն, ազգագրություն և բանահյուսություն», Ա. Գրիգորյանի «Գրականություն», Գ. Հակոբյանի, Է. Միրաքյանի «Լեզվագիտություն», Ս. Ռիզաևի «Արվեստագիտություն», Գ. Գրիգոր-

յանի «Փիլիսոփայություն և իրավունք», Հ. Ինճիկյանի «Արևելագիտություն», Կ. Ղաֆադարյանի «Պատմական բանգարան», Գ. Մադոյանի «Գրականության և արվեստի բանգարան» հոդվածները:

«Հասարակական գիտություններ» գլխում զետեղված վերոհիշյալ հոդվածներում ընդհանուր գծերով ցույց են տրված հայ պատմաբանների, տնտեսագետների, գրականագետների, հնագետների, փիլիսոփաների, արվեստագետների և հասարակական գիտությունների այլ բնագավառների գիտնականների հետազոտությունների արդյունքները հայագիտության տարբեր հարցերի վերաբերյալ:

Հասարակական գիտությունների հիմնարկների գիտահետազոտական աշխատանքներում հայ հնագույն մշակույթի լուսաբանման հետ միաժամանակ կարևոր տեղ է տրված նոր շրջանին, հայ ժողովրդի՝ սովետական կարգերում ձեռք բերած նվաճումների հետազոտմանն ու ընդհանրացմանը:

Ա. Ս. ԿԾՈՅԱՆ — Բժշկագիտությունը Հայաստանում XI—XIV դարերում, ՀՍՍՀ ԳԱ *Հրատարակչություն, 1968, 439 էջ։*

Աշխատության մեջ հայ ժողովրդի ստեղծած բժշկական մշակույթի հարուստ ժառանգությունից վեր են հանված առավել հետաքրքրություն ներկայացնող բժշկագիտության տարբեր բնագավառների արժեքները XI—XIV դարերում, բացահայտված են միջնադարյան հայ բժիշկների մասնագիտական կարողություններն ու մտահորիզոնը, համաշխարհային բժշկագիտական գրականության հետ ունեցած ծանոթության աստիճանը: Մեսրոպ Մաշտոցի անվան մատենադարանի ձեռագիր փաստական հարուստ նյութերի վկայակոչությամբ ցույց են տրված, որ հակառակ նույն ժամանակաշրջանում Արևմտյան Եվրոպայի երկրներում գիտությունների ասպարեզում իշխող սխոլաստիկային և դոգմատիզմին, Հայաստանում բնագիտությունը, բժշկագիտությունը զարգանում էին գերազանցապես բնափիլիսոփայական, մատերիալիստական աշխարհաբմբռնման ուղղությամբ:

Աշխատությունը բաղկացած է 9 գլխից և ռուսերեն ու անգլերեն լեզուներով ամփոփումներից:

Առաջին գլխում, որը կրում է «Սոցիալ-տնտեսական կյանքի զարգացումն ու մշակույթի վերելքը Հայաստանում X—XIV դարերում» խորագիրը, լուսաբանված է տվյալ էպոխայում հայ ժողովրդի ընդհանուր առաջադիմությունը պայմանավորող կարևորագույն նախադրյալները: IX դարի վերջում հայ ժողովուրդը ավելի քան 200 տարի տևած համատ պայքարից հետո ազատագրվում է արաբական խալիֆարի լծից և վերականգնում իր պետական ինքնուրույնությունը: Ներքին և արտաքին առևտրի զարգացման հետ անում ու հարստանում են այնպիսի քաղաքներ, ինչպես Անին, Արծնը, Կարսը, Դվինը, Վանը, Արճեշը, Մանազկերտը, Բաղեշը, Խլաթը, Նախիջևանը և այլն: Տեղի են ունենում սոցիալ-տնտեսական և հոգևոր կյանքի տեղաշարժեր: Լայն զարգացում են ստանում փիլիսոփայությունը, կենսաբանությունը, բնագիտությունը, մաթեմատիկան, քիմիան, բժշկությունը:

Աշխատության երկրորդ գլխի՝ «XI—XIV դարերի հայ հեղինակների ընդհանուր կենսաբանական հայացքները» համառոտ ակնարկում հեղինակը քննարկում է Գրիգոր Մագիստրոսի, Հովհաննես Սարկավագի, Հովհաննես Երզնկացի Պլուզի, Մարեոս Ջուղայեցու բնագիտական հայացքները:

Մատենագիտական հարուստ նյութերի հիման վրա գրքի 3, 5, 6, 7, 8, 9-րդ գլուխներում հեղինակը լայն պլանով քննարկում է XI—XII դարերի հայ բժշկագիտության զարգացման վերաբերյալ հարցերը: Այդ բաժիններում հետազոտված՝ հայ բժիշկների անատոմիական գիտելիքները, կլինիկական մտքի զարգացումը Հայաստանում, վիրաբուժությունը Հայաստանում, վարակի և հպավորակայնության գաղափարների, տենդային հիվանդությունների կլինիկական նկարագրությունների և դրանց բուժման ձևերը, նյարդային և հոգեկան հիվանդությունների վերաբերյալ հնադարյան հայ բժիշկների բողած ժառանգությունը, որոնք մասնագիտական և մատենագիտական արտացոլումն են գտել Ա. Կծոյանի տվյալ աշխատության մեջ, հանդիսանում են XI—XIV դարերի հայ մեծ մտածողների առաջադիմական մտքերի արգասիքը:

Ա. ՏԵՐ-ՂԵՎՈՆԴՅԱՆ — Ազարանգեղոսի արաբական նոր խմբագրությունը, *ՀՍՍՀ ԳԱ Հրատարակչություն, 1968, 264 էջ։*

Ոսկեդարյան հայ մատենագրության գոհարը հանդիսացող Ազարանգեղոսի Պատմությունը մի բացառիկ երկ է, որ մեր ժողովուրդը մուծել է համաշխարհային մշակույթի գանձարանը:

Պատմաբան Ս. Տեր-Ղևոնդյանի «Ագաթանգեղոսի արաբական նոր խմբագրությունը» աշխատության մեջ քննության է առնված Ագաթանգեղոսի Պատմության արաբերեն նորահայտ բնագիրը: Հայկական բնագրի և հունական միջանկյալ թարգմանության հետ կատարված համեմատությունների միջոցով հեղինակը ցույց է տալիս սույն արաբական թարգմանության նշանակությունը Ագաթանգեղոսի հայկական հնագույն բնագիրը վերականգնելու գործում:

Հեղինակը նկատի է առել նաև Ագաթանգեղոսի Պատմության հունարեն, արաբերեն, վրացերեն, հաբեշերեն, լատիներեն և այլն թարգմանություններն ու խմբագրությունները:

Ա. Տեր-Ղևոնդյանի ներկա աշխատության մեջ քննարկվող Ագաթանգեղոսի Պատմության արաբական ձեռագիրը գտնվում է Սինայի Ս. Կատարինեի վանքում (Եգիպտոս): Ձեռագրի մանրաժապավենը քննարկվող աշխատության հեղինակին է տրամադրել Բելգիայի նշանավոր հայագետ, պրոֆեսոր Ժ. Դարիտը: Սինայի Ս. Կատարինեի վանքը միջնադարյան Արևելքում համաքրիստոնեական մշակութային կարևոր կենտրոն է եղել:

Աշխատության հեղինակը բաղդատելով Ագաթանգեղոսի Պատմության հունական և արաբական թարգմանությունները, ցույց է տալիս, որ նրանց միջև կան բավականին տարբերություններ: Ագաթանգեղոսի նոր արաբական թարգմանությունը, ավելի մոտ է հայերեն բնագրին, ոգնում է բացահայտելու միջնադարյան հայ մշակույթի այդ առաջնեկի ստեղծման ու նրանում բարձրացրած բազմաթիվ հարցեր:

Սակայն, «Ագաթանգեղոսի Պատմությանն առնչվող հարցերը,— նշում է գրքի հեղինակը,— դեռ սպառված չեն: Այնքան շատ են նրա բազմալեզու թարգմանությունները, և այնքան բազմապիսի ու կենսոտ նրանց հետ կապված խնդիրները, որ թեև երկու հարյուրամյակ բազմազգ ուսումնասիրողներ են նրանով զբաղվել, այնուամենայնիվ, դեռ շատ աշխատանք պետք է կատարվի»: Գրքին կցված է արաբական նորահայտ բնագիրը: Ցանկալի էր, որ արաբական բնագրին զուգահեռ տրվեր նաև հայերեն թարգմանությունը: